**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**/2-րդ հանրային լսման/**

**«Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

ք. Երևան «19» նոյեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ-էկոլոգ, Էլլադա Արամյանը,
- Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ն. Իսրաելյանը, աշխատակազմի քարտուղար Ն. Ազիզյանը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ումուրշատյանը,
- Ճարտարապետներ Ա. Մաթևոսյանը և Գ. Աստվածատրյանը, ներկայացուցիչ Արթուր Մինասյանը:

Հանրային լսմանը մասնակցում էին նաև Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամները Արմենակ Դանիելյան և Արտակ Սարգսյանը, քաղաքացիներ:
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 19-ին ժամը 15:00-ին Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2025 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 11:00-ին Երևան, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը: Այդ լսման արդյունքում 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 402-Ա որոշմամբ Երևան քաղաքի ավագանին Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում

բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի նոյեմբերի 1-ի համարում, իսկ հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում: Նշեց նաև, որ շահագրգիռ հանրության կողմից գրավոր առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ, ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում, շրջակա միջավայրի նախարարություն, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ և (կամ) Երևանի քաղաքապետարան չեն ներկայացվել:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, որից հետո խոսքը փոխանցվեց ճարտարապետներ Ա. Մաթևոսյանը և Գ. Աստվածատրյանը, ովքեր համապարփակ ներկայացրեցին նախատեսվող գործունեության մանրամասները:

Հնչեցին հետևյալ հարցադրումները.

**Հարց՝**

Արմենակ Դանիելյան՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ.

Որքա՞ն ժամանակում եք նախատեսում ավարտել աշխատանքները:

**Պատասխան՝**

Գ. Աստվածատրյանը աշխատանքները նախատեսվում է իրականացնել 72 ամիս տևողությամբ:

**Հարց՝** Արմենակ Դանիելյան՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ.

Քանդման աշխատանքների ընթացքում առաջացած փոշու վերաբերյալ վարչական շրջանի բնակչության կողմից բողոքներ են ներկայացվել, հետևաբար անհրաժեշտ է շին. հրապարակի կառուցում նոր քանդում:

**Պատասխան՝**

Ա. Մաթևոսյանը աշխատանքների ընթացքում իրականացվելու են բնապահպանական միջոցառումներ փոշու արտանետումները նվազեցնելու համար, ինչպես նաև իրականացվում է շին. հրապարակի կառուցում:

**Հարց՝**

Արշակ Սարգսյանը՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Քանի մեքենայի համար է նախատեսված ավտոկայանատեղին,կանաչապատման մակերես քանի տոկոս է կազմում և քանի բնակարան է նախատեսված նախագծով:

**Պատասխան՝**

Ա. Մաթևոսյան. կանաչապատման մակերես կազմում է՝ 2695 քմ-40%, բնակարանների քանակ՝ 390 հատ, ավտոկայանատեղ՝ 284 հատ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ հիմնականում ընթացակարգային, հետագա հարցերի վերաբերյալ, որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ և ներկայացնելով հետագա սպասվող ընթացակարգային գործողությունները, ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

Քաղաքացի Համլետ Վաչենանցի ներկայացուցիչ Արթուր Մինասյան